



«Տիրոջ շնորհիվ մեր Ժողովուրդը հառնեց մահվանից»

ԳԱՐԵԳԻՆ Բ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ



«Կրթություն արտերկրում» ծրագրի շրջանակներում ապրիլի 25-ին Հայաստան էին ժամանել ուսանողներ Ռուսաստանից եւ ԱՄՆ-ից: Վերջիններիս մի խումբն արդեն իսկ նախորդ տարվա սեպտեմբերին այցելել էր Գևորգյան հոգևոր ճեմարան և հանդիպում ունեցել ճեմարանի տեսչի՝ Հոգեշնորհ Տ. Գարեգին վրդ. Համբարձումյանի հետ: Այս տարի ևս, ծրագրում ներառված և տարբեր երկրներից Հայաստան ժամանած ուսանողները ծրագրի պատասխանատուների ուղեկցությամբ ապրիլի 25-ին այցելեցին ԳՀԸ:Հյուրերին ընդունեց ճեմարանի տեսուչ Հայր Սուրբը՝ նրանց ներկայացնելով Հայաստանում տիրող կրոնական պատկերի վերաբերյալ մի դասախոսություն:



Ճեմարանականները դպրոցում



Գևորգյան հոգևոր ճեմարանի տեսչությունը Մայր Աթոռի Քրիստոնեական դաստիարակության կենտրոնի աջակցությամբ սույն թվականի ապրիլի 18-22-ը ընկած ժամանակահատվածում նախաձեռնել էր ճեմարանի ավագ լսարանների սաների այցելություն Հայաստանի տարբեր մարզերի դպրոցներ: Այցելության նպատակն էր հանդիպումներ ունենալ դպրոցականների հետ՝ նրանց հետ խոսելու Հիսուս Քրիստոսի Հարության տոնի խորհրդի մասին: Սաները դասախոսությունների ընթացքում առիթ ունեցան նաև ավարտական դասարանների աշակերտներին ներկայացնել Սուրբ Էջմիածնի Գևորգյան հոգևոր ճեմարանի առաքելությունը և պատասխանել նրանց հետաքրքրող մի շարք հարցերի:





Մշակութային օր

Ապրիլի 29-ին Գևորգյան հոգևոր ճեմարանի սաները տեսչության ուղեկցությամբ այցելեցին ՀՀ ազգային թանգարան, որտեղ ի մոտո ծանոթացան հայ ժողովրդի հոգևոր և նյութական արժեքներին:

Նույն օրը՝ թանգարանում շրջելուց հետո ճեմարանականներն այցելեցին Մոսկվա կինոթատրոն՝ դիտելու Terry George-ի հեղինակած Հայոց Ցեղասպանության մասին պատմող «The promise» (Խոստումը) ֆիլմը:



Հանդիպում հոգևորական դասախոսների հետ

Ս. թ. մայիսի 5-ին Գևորգյան հոգևոր ճեմարանի տեսչության նախաձեռնությամբ Կոմիտասի անվան դահլիճում տեղի ունեցավ հանդիպում ճեմարանի հոգևորական դասախոսների հետ: Հանդիպման ընթացքում քննարկվեցին ճեմարանի կրթական ծրագրերի բարելավման և զարգացման հետ կապված մի շարք հարցեր:



#KeepThePromise



Հայ հոգևորականների կորուստները ցեղասպանության տարիներին

Հիրավի, Ապրիլի 24-ը հայ իրականության մեջ համազգային սգի օր է: 1914-18 թթ. -ի արյունոտ ուղին խտացված է այս մեկ օրվա մեջ: Պատմության հոլովոյություն հայը շատ է տեսել կոտորածներ, և սա դրանց բարձրակետն է. թերևս մարդ-զազանի միտքը նման նախճիր այլևս չճնի: Այդ տարիներին Հայ Եկեղեցին անմասն չմնաց կատարվածից: Անկախ պետականության կորստից հետո Եկեղեցին էր ստանձնել հայության պաշտպանության գործը: Բնական է, որ հայ հոգևորականությունը թուրքական հայաջինջ քաղաքականության առաջին զոհերից պիտի լիներ: Գաղտնիք չէ, որ հայոց ցեղասպանությունը իրագործվում էր նախօրոք մշակված ծրագրի համաձայն: Նախքան խաղաղ բնակչության բռնազաղթը, կառավարությունը հրահանգեց հավաքել զենքերը՝ հնարավոր դիմադրությունից խուսափելու համար: Զգալով մոտալուտ վտանգը՝ հայերը չեն կատարում այս կարգադրությունը: Սկսվում են ձեռքբերվածություններ, խոշտանգումներ: Տանջանքի առարկա դարձան հիմնականում հոգևորականները: Նախ նրանց մորուքները պոկում կամ այրում էին, այնուհետև հատուկ մեքենաներով ձգում էին գուլխները՝ մինչև ուշագնացություն, կախում էին և միայն կիսամեռ իջեցնում, որպեսզի անգիտակից վիճակում գտնվող զոհերը հայտնեն այն, ինչ պետք էր: Նրանց կրունկներին մեխեր էին խփում, պայտում կամ խաչում էին: Խարբերողի Կարմիր գյուղի քահանան, տանջանքի վայրից փախչելով, իրեն նետում է ջրհորը, որպեսզի ոչինչ չսաի: Ջրհորից հանելուց հետո նրա գուլխը կացինով ջախջախում են: Տեր Ասատուր անունով մի քահանայի թամբում են և գրաստի տեղ օգտագործում, մինչև որ զենքերի տեղը հայտնի: Տեսնելով քահանայի աննկուն կամքը՝ նրան պայտում ու խաչում են: Թուրքահայ թեմերի մի շարք առաջնորդներ ձեռքբերվում և զազանաբար սպանվում էին, որպեսզի ժողովրդին չապատամբեցնեն: Երզնկայի նորընտիր առաջնորդ Սահակ ծ. վրդ. Օդաբաշյանին չերքեզները կառքի մեջ սպանում են՝ գնդակների տեղատարափ թափելով կառքի վրա: Ուրֆայի առաջնորդ Արտավազ ծ. վրդ. Գուլենտերյանը զինահավաքի մասին ժամանակին տեղեկացնում է ժողովրդական ուժերին, և մարդիկ հասցնում են պահել լավ զենքերը ու հանձնել վատերը: Նրան ձեռքբերվում են և Ուրֆայից մեկ ժամ հեռավորության վրա գտնվող Կարաքեռփրու վայրում խոշտանգում, պոկում մորուքը և վերջում գլխատում: Յոզղատի առաջնորդ Ներսես եպս. Դանիելյանը սպանվում է Մեքաստիայի ճանապարհին՝ ծառի տակ: Նախքան սպանվելը նրան հայտնել էին, որ սպանելու են իրեն (նման դեպքում մարդ վերահաս մահվան մտքից սոսկալի հոգեկան տանջանք է կրում): Սրբազան հայրը գնդակահարվում է առ Աստված աղոթք վերառաքելիս. մարմինը այդպես էլ անթաղ է մնում: Բազում թեմերի առաջնորդներ և ծխական քահանաներ իրենց հոտերի հետ միասին են աքսորվում: Կարինի առաջնորդ Սմբատ եպս. Սաադեթյանին խմբից առանձնացնում և ստիպում են Երզնկայի գերեզմանատանը սեփական գերեզմանը փորել և երբ ավարտում է, իջնում է այնտեղ մահվանից առաջ աղոթելու: Հենց աղոթքի ընթացքում էլ թուրք զազանները կացինները ձեռքներին հարձակվում են սրբազան հոր վրա, կտրում մի ձեռքը, ոտքը, հանում են աչքերը, պոկում են մորուքը: Վերջում թուրք ոստիկանները, իրենց զազանական կիրքը հագեցնելուց հետո, պարզապես կրակում են նրա սրտին: 1916 թ. հուլիսին ձեռքբերվեց Կ. Պոլսի պատրիարք Զավեն արքեպիսկոպոսը: Նա ողջ մնաց միայն Պոլսի ամերիկյան և գերմանական դեսպանների շնորհիվ և հասավ Բաղդադ՝ իր աքսորավայրը: Մինչև պաշտոնավարման վերջին պահը պատրիարքը դիմումներ էր հղում մեծ տերությունների դեսպաններին օգնություն հայցելով, սակայն անարդյունք. զազանությունները շարունակվում են: Տիգրանակերտի փոխառաջնորդ Մկրտիչ վրդ. Ջղատյանին և առաջնորդարանի 9 քահանաներին ձեռքբերվում են: 40 օր հարցաքննում և կտտանքների են ենթարկում հայր սուրբին: Սպանելուց առաջ քաղաքի փողոցներում նրան պտտեցնում են: Մի մահմեդական խոջա ծաղրելով ասում է. «Թող քո Աստվածը քեզ փրկի տանջանքներից»: Ակամայից հիշում եմ Տիրոջ խաչելության դրվագը, երբ Նրան ծաղրում էին ասելով. «Տեսնենք Եղիան կգա՞, որ դրան փրկի» (Մտթ. ԻԷ 49) կամ «Եթե դու ես հրեաների թագավորը, փրկիր քեզ» (Ղուկ. ԻԳ 37): Այնուհետև բանտում փունջ-փունջ մորուքը պոկում են, քաշում են ատամները, ապա հրաշեկ երկաթով քունքերը այրում, աքցանով մարմնի մսերը պոկում, հետո այրունաշաղախ մարմնի վրա յուղ են կաթեցնում և մաս-մաս այրում: Վերջում կիսաայրված ու այլանդակված մարմինը կախում են ի տես ժողովրդի, իբր թե փորձել է այրել բանտը և մահացել: Ընդհանուր առմամբ ավելի քան 4000 հոգևորական է զազանաբար հոշոտվել այդ տարիներին: Նրանք աննկուն մնացին, չմատնեցին, չստորացան, չկոտորվեցին: Շավարշ ծ. վրդ. Սահակյանն անգամ խնդրում է կառապանին արագ քշել, որպեսզի շուտ հասնի մահվան վայրը: Հիսուս Քրիստոս մի առիթով իր աշակերտներին ասել է. «Օտոան մեծ չէ, քան իր Տերը, այն ինչ ինձ արեցին՝ ձեզ էլ կանեն»: Արյան մեջ խեղդված հոգևորականության նահատակման այս պատմությունները գալիս են սպացուցելու Տիրոջ խոսքը:

Պատրաստեց Ծերուն սրկ. Ներսիսյանը

Հայ գողգոթայի խաչակիրները

1915 թ.: Մի ամբողջ ժողովուրդ տեղահանվեց և նահատակվեց տարագրության օտար ճամփաներին: Սա դարձավ արևմտահայոց Գողգոթայի դժնդակ ճանապարհը, բայց ժողովուրդը, մանավանդ հայ քրիստոնյան, չընկրկեց, այլ նահատակությունը վերածեց հաղթանակի: Խաչելության Գողգոթային հաջորդեց հարության պայծառ արշալույսը: Այնուամենայնիվ, մենք ապրում ենք նաև երբեք չմոռանալով այն կորուստները, որ վայրահաչ թշնամին պատճառեց մեզ՝ մեր հնամենի վանքերը պայթեցնելով, ոտնակոխ անելով մեր ստեղծածները, մագաղաթներն այրելով, մարդկանց դաժանաբար կոտորելով, հայության կյանքին մտամուխ գրողներին ու արվեստագետ անձանց էլ վայրագաբար քստորելով անապատներ. լուսնիկի մահիկը երկար ժամանակ կախված մնաց հայ ժողովրդի բոսորագույն երկնակամարից՝ լենկթեմուրյան օրերի մահագույժ մոայլությամբ: Այնքան ահարկու էր այդ ամենը, որ, իրապես, ինչպես Ժակ դը Մորգանն է նկատել՝ ոչ մի լեզու այնքան հարուստ ու գունեղ չէ, որ նկարագրի այդ սարսափները: Այդ օրերին արիաբար զոհվելու գնացին շատ նշանավորներ՝ Միամանթոն, Մմբատ Բյուրատը, Ռուբեն Զարդարյանը, Երուխանը, Դանիել Վարուժանը. Գր. Զոհրապը, Ռուբեն Սևակը (որին թույլ է տրվել ազատ ապրել Չանկրում) և ավելի քան 200 նշանավոր մտավորականներ. սա ոչ այլ ինչ էր, եթե ոչ թուրքերի դիվային ծրագրի մի մասը: Տեղահանության և քստորի այդ օրը՝ ապրիլի 24-ը, որը 1919 թ-ից հիշատակի օր է, անվանվում է Կարմիր կիրակի: Այս օրերին էր, որ շատերի հետ ձեռքակալվեց նաև Կոմիտաս վարդապետը (նա Վրթանես Փափագյանի, Թեոդիկի, Երվանդ Օտյանի հետ այն մարդկանց շարքերում էր, որոնց հաջողվեց փրկվել), որն իր կյանքի ամենից մեղամաղձոտ օրերն անցկացրեց Փարիզի հոգեբուժարանում: Ներքին գործերի մինիստր Թալեաթ փաշայի հրամանով է, որ տեղահանված մտավորականներին Անկարա տարան՝ նախապես մշակված ծրագրի համաձայն: Այդ ամենն են հաստատում Առաջին համաշխարհային պատերազմում Օսմանյան կայսրության՝ առանձին նշանակություն ունեցող դաշնակից պետությունների՝ Գերմանիայի, Ավստրո-Հունգարիայի և Բուլղարիայի արխիվային փաստաթղթերը: «Ամենուն տարեցույցը» տարեգրքի հեղինակ Թեոդիկը, որը Շահան Շահնուրի մորեղբայրն էր, իր «Հուշարձան ապրիլ տասնմեկին» գրքում ներկայացնում է բոլոր զոհվածների անունները՝ իրենց լուսանկարներով ու փաստաթղթերով:

Մեծ Եղեռնի ընթացքում մտավորականության ոչնչացման փուլի առկայությունը գալիս է ևս մեկ անգամ ապացուցելու, որ երիտթուրքական կառավարությունը հայերի ցեղասպանությունը նախապես է կազմակերպել և իրականացրել պետական մակարդակով՝ սկսած դեռևս 19-րդ դարի վերջից, երբ հայերը ինքնապաշտպանական կռիվներ էին մղում Մասունում, Զեյթունում, Տարոնում, Վան-Վասպուրականում...

Պատրաստեց Նարեկ Գասպարյանը

Ամենից վատը ոչ թե
ընկնելն է, այլ՝ մնալը
գետնի վրա:



Տիրոջ շնորհիվ մեր
Ժողովուրդը հառնեց
մահվանից

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ
ՀԱՅՈՑ

Նշանավոր ճեմարանականի անկյունը

Հայ մեծանուն գիտնականի էջմիածնական տարիները

«Մարդու ուղեղը աշխատող գուրթանի խոփի նման է, որքան
աշխատանում է, այնքան պայծառանում է»:
Հրաչյա Աճառյան

Հանճարների անխամբելի աստղաբույլից է Աճառյանը, որի կատարածը մեծագույն սխալներ էր, իսկ կյանքը՝ բացառիկ հրաշք: Համառ աշխատանքի արդյունքում էր որ լեզվաբանության տեսադաշտն ընդլայնվեց և գուրդովեց համեմատական լեզվաբանության հետ: Հայագետ-լեզվաբան լինելուց զատ՝ նա նաև անկեղծ հուշագիր է՝ պատմական դեպքերը պատմաբանի գրչով, հետազոտողի աշխրջությամբ և կենսագրի անվրեպությամբ շարադրող: Նա իր կյանքի ողիսականը շարադրել է «Կյանքիս հուշերից» գրքում, որի երկրորդ մասը Հայաստան կատարած նժողեհական ուղևորության տարեգրությունն է հետաքրքիր և անկեղծ մանրամասնությունների նկարագրությամբ: Եվրոպայում ուսանողական երկար դեգերումներից հետո, որոնք թերևս նրա երիտասարդությունն էլ չէին խլել, վերադառնում է հայոց աշխարհ և օմնիբուսով շտապում էջմիածին՝ քայլելով Տրդատա դռնից մինչև Վեհարանի դիմաց գտնվող Ղազարապատ շենքը, որը իր հետամնաց և գյուղական անկազմակերպ վիճակով, ընչազուրկ ու հաց մուրող ժողովրդով միանգամից հակադրվում է զարգացած եվրոպական ցովրնթաց ու հարուստ միջավայրին: Պակաս տարբերվող չէր և արդեն Փարիզի լեզվաբանության անդամ դարձած հնացած շորերով, պատառոտված կոշիկներով, Տուրգենևի պատկերած աղքատ, այտուցված ու ոջլոտ հերոսների կերպարանքով ուսանողը, որը սկզբից տհաճություն է առաջացնում հյուրանոցի պետ Սիոն վարդապետի մոտ, բայց երբ վարդապետը լսում է պրոֆեսոր Ռոբբախի հետ գերմաներենով նրանց մտերմիկ գրույցը, ինքնասիրությունը շոյվում է, և նա մի կեղտոտ սենյակ է հատկացնում անպահանջ ուսանողին, որը փարիզյան օրերից արդեն իսկ համակերպվել էր ապրելու օրերից սկսում է նետվել էջմիածնի հետաքրքրությամբ ուսումնասիրում էջմիածնի հատորներում տեղ գտած ասես մեղուն գտել էր բազմաբույր մի ծաղիկ և կյանքի վերջը նրա հաղորդությունը եղավ վերադարձած Խրիմյան կաթողիկոսի հետ ճեմարանում որպես տաճկերենի ուսուցիչ-գիտության անխոնջ մշակների հետ (թեև Հյուբշմանին): Աճառյանը եղել է ճեմարանի նրանից հետո մասնագետ չի ճարվել: Առաջին վերակացու Մարտիրոս Հալնագարյանը, բարեկամանալու իր բարբառը իմացող մեկի որն էր Ագուլիսի բարբառի բառարանի կազմումը, ավարտին հասցնել: Չնայած իր ջերմ ընկերական միջավայրին՝ ամեն տաճկահայի պես արհամարհված ու ատելի էր Աճառյանը. պատճառը թուրքական կառավարության դժնի քաղաքականությունն էր, որը սկիզբն էր արևմտահայոց կոտորածների: Ռուս խստահայաց կառավարությունը տաճկահայերին թույլ էր տալիս միայն դասավանդել ֆրանսերեն ու տաճկերեն առարկաները. բայց դա էլ բավական էր, որ ճեմարանական ոչ մի միջոցառման չմասնակցեին նրանք. «... Ես ապօրինի ուսուցիչ էի», - ցավով եզրակացնում է Աճառյանը: Նրա դեմ առաջին օրերից չարությամբ էր լցված նաև ճեմարանի տեսուչ «անհրապույր ու խոժոռ» Կ. Կոստանյանը, որը ճեմարանականների շրջանում հայտնի էր «Մուլթան Համիդ» ծաղրանվամբ: Հակառակ այս գործ իրականությանը՝ այլ պատկեր է Աճառյանի և մյուս դասախոսների մտերմությունը: Նրան առաջին ողջունողը եղել է մանկավարժ Սեդրակ Մանդինյանը, որը, լինելով թիֆլիսցի, զարմացել էր Աճառյանի՝ վրացերենի իմացության վրա: Մանդինյանի քենակալը պատմաբան Ստեփանոս Կանայանն էր, որը ճեմարանում դասավանդում էր հայ և ընդհանուր եկեղեցու պատմություն: Ընկերների մեջ տարբերվում էր «իրենից դուրս ոչ ոքի չճանաչող» Մանուկ Աբեղյանը, որը նույն արգահատելի վերաբերմունքն ուներ տաճկահայերի նկատմամբ. Աբեղյանի համար արևմտահայերից սիրելի են եղել



միայն հասարակական բարքերը և խարխուլ միջավայրը երգիծող Հ. Պարոնյանը և Էպոսն առաջինը գրի առնող Գ. Մրվանձոյանցը: Նրա ինքնահավան բնավորությունը սեպեց նրանց մեջ մի անջրպետ, և գիտության երկինքը մխրճված երկու հայագետների միջև այդպես էլ չեղավ ընկերային ջերմ կապ. պատճառը միջուցե գրական նախանձն էր: Աճառյանն առանձին էջեր է նվիրել իր հայրենակից և բարեկամ Կոմիտասին, որի հետ թերևս ճեմարանում աշխատելու տարիներին ամենամոտն էր. երկուսն էլ հայագիտության տաճարում սպասավորելու մեջ անգերազանցելի էին: Աճառյանի վիճակը ճեմարանում փոխվել է, երբ վերացել է Կոստանյանցի մեկտարյա «սուլթանական իշխանությունը» և նրան փոխարինելու է եկել բարեկիրթ, Գերմանիայում կրթված Կարապետ վրդ. Տեր-Սկրտչյանը, որը ոչ միայն բարձրացրեց Աճառյանի աշխատավարձը, այլև նշանակեց «Արարատ»-ի և ճեմարանի սրբագրիչ: Էջմիածնում լինելու ժամանակ նա ականատես է լինում ռուս-թուրքական հարաբերությունների սրմանը, բարձրանում է Մասիսի սպիտակափառ գազաթը, ինչպես իրենից առաջ որպես թարգման բարձրացել էր Խ. Աբովյանը, շահի գալու կապակցությամբ անգամ մի երգ է գրում, որը Կոմիտասի ղեկավարությամբ կատարում է ճեմարանի երգչախումբը, Վեհափառի հետ կազմակերպում է Մուզաֆֆերեդդին շահի ընդունելությունը...

Մի քանի օր ևս անցկացնում է ճեմարանում, ապա չմերժելով առաջարկը մեկնում է Շուշի:

Պատրաստեց Նարեկ Գասպարյանը

Գևորգյան հոգևոր ճեմարանը Երվանդ Տեր-Մինասյանի հուշերում

Հայագիտության փառանգում մեծ է եղել գիտնական-վարդապետ Երվանդ Տեր-Մինասյանի դերը, որը Շիրակ աշխարհի Հառիճ գյուղից էր, որն իր բնության ակնախտիտ գեղեցկություններով, ճգնավորի նեղլիկ մատուռում, փրփրադեզ գետերի կարկաչով անջինջ մնաց մեծ գիտնականի հիշողության մեջ: Նա իր առաջին հոգևոր քայլերն արել է տեղի Ս. Աստվածածին եկեղեցում, որտեղ հայրը՝ տեր Ղազարը, քահանայագործում էր, իսկ պապը՝ տեր Մինասը, Հառիճի դպրոցի ուսուցչապետությունն էր ստանձնել: 1892 թ. Երվանդի գործվագուրթ մոր ճակատի ոսկիները ծախեցին, որ գյուղի ծխական քահանա հայրը որդու հետ Էջմիածին գնալիս ճանապարհաձախս ունենա: Եվ ահա ամառային մի կիզիչ օր հայր ու որդի, ավանակներով Ապարանի սառնորակ աղբյուրների մոտ հանգստանալով, ճանապարհ ընկան դեպի Գևորգյան ճեմարան: Ճեմարան ընդունվելու օրերին տեսուչն էր Արիստակես եպս. Սեդրակյանը, որն իր պաշտոնից հրաժարվեց այն ժամանակ, երբ Փոփոխություններից մեկն էլ այն էր, որ նոր պայմանավորված Մայր տաճարի խմբի Կարամուրզայի ձեռքից անցավ երիտասարդ Աճառյանի պես Երվանդը շատ մտերիմ է եղել ամռանը ընկերներով Հառիճ են գնացել՝ Երվանդ շաբաթ մնալուց հետո, մալարիայից Կոմիտասը վերադարձել է Էջմիածին: Երվանդի՝ ուսման մակարդակն ընկած էր: Ուսանողների սերտողության ժամերին ուսուցիչները գալիս Հաջորդ ուսումնական տարում, երբ տեսուչ էր Երվանդը մալարիայից բուժվելու համար ընթացքում ուսանողական խռովություններ են Ներսիսյան դպրոց: Ճեմարան վերադառնալով՝ Երվանդը ծանոթանում է տեսչի օգնական Կարապետ վրդ. Տեր-Սկրտչյանի հետ, որը շատ ուրախ էր՝ տեսնելով իր նախասիրություններով ոգևորված երիտասարդին: Երվանդի սիրելի դասախոսներից են եղել Հակոբ Մանանդյանը, Հր. Աճառյանը, Մաղաքիա արք. Օրմանյանը, որը ճեմարան էր հրավիրվել որպես աստվածաբանության ուսուցիչ, բայց, չանցած մեկ տարի, ռուսահպատակ չլինելու համար հեռացավ Էջմիածնից:



Էջմիածին ժամանեց Սկրտիչ Խրիմյանը: կաթողիկոսի նշանակությամբ ղեկավարումը Քրիստափոր Կոմիտաս վրդ. Սողոմոնյանին: Կոմիտասի հետ, անգամ 1905 թ. Տեր-Մինասյանի ծննդավայրը, ուր 6 վերջնականապես ազատված, ճեմարանում սովորելու տարիներին վիճակն այնքան էր թուլացել, որ էին սերտարան և օգնում դասերն անել: նշանակվել բանասեր Կ. Կոստանյանը, վերադարձել էր հայրենի Ղիչաղ: Այդ եղել, և շատերը հեռացվել են ու մեկնել

1900 թ. մայիսին Երվանդ Տեր-Մինասյանն առաջին կարգի դիպլոմով ավարտեց ճեմարանը և, սարկավազ ձեռնադրվելով, դարձավ Էջմիածնի վանական միաբանության անդամ: Տեսնելով ապագա գիտնականի ընդունակությունները՝ ճեմարանի մանկավարժական խորհուրդը նրան ուղարկեց արտասահման ուսումը կատարելագործելու:

Գերմանիայում ուսումն ավարտելուց հետո նա պիտի վերադառնար ճեմարան, բայց որպես ընդհանուր եկեղեցու պատմության դասախոս:

Պատրաստեց Սևակ սրկ. Հակոբյանը

«Ավետման» պատկերները Հայ Եկեղեցում

«Ավետում» նշանակում է բարի լուր: Ղուկաս Ավետարանիչը պատմում է, որ Գաբրիել հրեշտակապետը Աստծո կողմից ուղարկվում է Նազարեթ՝ կույս Մարիամի մոտ, և ավետում վերջինիս որդի ունենալու մասին, որը պիտի միաժամանակ լինի Բարձրյալի՝ Աստծու և Դավթի որդին (Ղուկ Ա 28-33):


Հայ եկեղեցական պատկերագրության մեջ Ավետման պատկերի վաղագույն նմուշը պահպանվել է 6-7-րդ դարերից, որը գտնվում է 989 թ. «Էջմիածնի Ավետարանում»:

Ավետման տեսարանի պատկերագրական հիմնական կառուցվածքն այս է. Գաբրիել հրեշտակապետը գլխավորապես ներկայացվում է ձախ կողմում: Իր աջ ձեռքը օրհնության նշանով ուղղված է դեպի Ս. Կույսը, իսկ ձախ ձեռքին սովորաբար լինում է կա մ գավազան, կա մ ծաղիկ: Հանդիպում է նաև գալարափաթեթ: Գրեթե բոլոր պատկերներում հրեշտակապետի թևերից մեկն իջնում է ներքև, իսկ մյուսը բարձրանում է վեր, ինչը խորհրդանշում է ողջույնը, սակայն վաղ եկեղեցու պատկերներում հրեշտակները պատկերվում էին առանց թևերի: Օրինակ՝ Պրիսկիլայի կատակոնրի Ավետման պատկերում հրեշտակը պատկերված է հռոմեացի հռետորի և պատգամաբերի կերպարով: Հաճախ հրեշտակները ճակատների ունենում են կարմիր նշան, ինչը խորհրդանշում է նրանց հրեղեն բնությունը: Հանդիպում են թե՛ կանացի նուրբ դիմագծերով, թե՛ տղամարդկային դիմագծերով, և թե՛ պատանի երեխայի տեսքով հրեշտակներ, ինչը վկայում է նրանց սեռական պատկանելություն կամ հասակ չունենալու մասին:


Մարիամ Աստվածածինը պատկերվում է կանգնած կամ նստած բարձով գահավորակի վրա, ինչը ցույց է տալիս նրա Դավթի սերնդից լինելը: Նա ձեռքին ունենում է սափոր կամ իլիկ, երբեմն նաև գիրք, որտեղից ընթերցում է. «Ահա կույսը պիտի յղիանայ ու որդի ծնի» (Ես. Է 14): Նույնն է գրված նաև հրեշտակապետի ձեռքերում հանդիպող գալարափաթեթում:

Իլիկով տարբերակը ծագում է Հակոբոս Տյառնեղբոր պարականոն ավետարանից, ըստ որի Մարիամը Երուսաղեմի տաճարի կույսերից էր, ում հանձնարարվել էր թե՛լ մանել խորանի վարագույրի համար: Շատ գեղեցիկ են հատկապես այն պատկերները, որտեղ Մարիամն այդ կարմիր թելը մատների մեջ անցկացրած պահում է սրտի մոտ, ինչը խորհրդանշում է Քրիստոսի խաչելությունը. այդ թելով կարված վարագույրը պետք է պատռվեր Քրիստոսի խաչելության ժամանակ (տե՛ս Մտթ. ԻԷ 51): Այն, որ Մարիամն իր իսկ ձեռքերով է մանում թելը, խորհրդանշում է նաև Քրիստոսի մարդեղությունը՝ կատարյալ մարդ լինելը, քանի որ վարագույրը խորհրդանշում է Քրիստոսին, իսկ Աստվածածնի ձեռքերով մանված թելը՝ վերջինիս մարմինը: Քրիստոս, կատարյալ մարդ լինելուց բացի, միաժամանակ եղել է նաև կատարյալ Աստված, այսինքն՝ եղել է Աստվածամարդ:

Աղբյուրն ու սափորը, մատնանշում են այն վայրը, որտեղ հրեշտակն ավետիս է տալիս Մարիամին: Կենաց ջուրն աղբյուրի ակից լցվում է սափորի մեջ: Ջուրը խորհրդանշում է Քրիստոսին, իսկ սափորը՝ Սուրբ Կույսին: Հաճախ ջուրը բխում է երկու ակից, ինչը մատնանշում է Քրիստոսի երկու կատարյալ բնություններն ըստ էության և մի բնությունն՝ ըստ միության:



6-7-րդ դդ.
989 թ. «Էջմիածնի Ավետարան»



Ավետման պատկեր Պրիսկիլայի
կատակոնրում (մոտ 3-4-րդ դդ.)

Ոսկե սափորի խորհրդաբանությունը հին արմատներ ունի: Աստծո ուխտի տապանակում, ոսկե սափորի մեջ էր պահվում կենաց հացի նախատիպը՝ աստվածային մանանան: Սա ևս մարդեղացման խորհուրդն ունի, քանզի կենաց հացը նույն ինքը Քրիստոս է (հմմտ. Հովհ. Զ 35), իսկ սափորն՝ Աստվածածինը:

Պատկերներում Աստվածածնի և հրեշտակապետի միջև հաճախ հանդիպում ենք ծաղկեփունջ կամ սկիհ, որը խորհրդանշում է Քրիստոսի գոհաբերությունը՝ պատարագը: Նկարված ծաղիկները բրաբիոններ են, որոնք մենք երբեմն տեսնում ենք նաև հրեշտակի ձեռքին: Բրաբիոնը հաղթանակի, ինչպես նաև Աստվածածնի կուսության և մաքրության խորհրդանշան է: Աստվածածնի հաղթանակը մեղքի հանդեպ պայմանավորված է նրա հնազանդությամբ: Մենք քաջատեղյակ ենք, որ նախաամյր Եվան Տիրոջ պատվիրանի հանդեպ անհնազանդությամբ ճաշակեց արգելված պտղից, ինչին հաջորդեց աստվածային պատիժը, մինչդեռ Ս. Կույսը, հնազանդվելով աստվածային պատվիրանին, օրհնություն գտավ Աստծուց:

Ուշագրավ է պատկերներում հանդիպող Սաբեկա ծառը: Շատ գեղեցիկ զուգահեռ կա Ավետման և Իսահակի գոհաբերության պատկերների միջև: Վրա գոհաբերության պատկերում խորհրդանշում է Քրիստոսի առկա է այն գաղափարը, որ տիպաբանական կերպով Այսպիսով, Ավետման ներկայությունը խորհրդանշում է ոչ նաև կորուսյալ դրախտը: Այն, ինչ բերեցին Հիսուսն ու Աստվածամայրը:

Շատ ուշագրավ է Ավետման որտեղ մանուկ Հիսուս արդեն իսկ դեպքեր, որտեղ պատկերները կրում մեկնողական բնույթ, այլ ոչ թե պարզ տիպի պատկերները հարում են հատկապես Ալեքսանդրյան աստվածաբանական դպրոցին: Այսպես, մի պապիրուսի վրա է Չաքարիայի մարգարեության վերջում, երկու կողմերից պատկերված են հետևյալ նկարները. հրեշտակը ավետում է Չաքարիային, որ պետք է որդի ունենա և Մարիամը այցելության է գալիս Եղիսաբեթին: Հետաքրքրական է այն հանգամանքը, որ Հովհաննեսը ևս ավետման ժամանակ արդեն իսկ պատկերված է իր հոր գրկում: Մյուս երեսին պատկերված Մարիամի ու Եղիսաբեթի հանդիպման դրվագում, վերջինս ողջունում է Մուրբ Կույսին ասելով. «Որտեղի՞ ց ինձ այս ուրախությունը, որ իմ Տիրոջ մայրը ինձ մօտ գայ» (Ղուկ Ա 43)՝ ցույց տալով Մարիամի գրկում գտնվող Հիսուսին:



Երկուսում էլ առկա է այդ ծառը, որի եղջյուրներից մի խոյ է կախված, ինչը խաչելությունը: Ավանդության մեջ Քրիստոսի խաչափայտը ներկայացնում է նաև կենաց ծառը: պատկերներում Սաբեկա ծառի միայն Քրիստոսի խաչելությունը, այլ կորցրեցին Ադամն ու Եվան, հետ

պատկերի այն հազվագյուտ տիպը, Մարիամի գրկում է: Կան բազմաթիվ են ավելի շուտ այլաբանական, պատմողական նկարագրության: Այս

Պատրաստեց Դավիթ սրկ. Սահակյանը

ՇՆՈՐՀ ՉԱՐՉԱՐԱՆԱՑ

Քրիստոսի չարչարանքների ավետարանական պատումը՝ Հուդայի մատնությունից, խորհրդավոր ընթրիքից ու Գեթսեմանիի աղոթքից մինչև Հուդայի համբույր, Պիղատոսի դատավարություն, Խաչի ճանապարհի և Գողգոթա, միշտ տպավորել է մարդկանց: Չարչարանքների պատճառի ու հետևանքի, Քրիստոսի զոհաբերության շնորհների մասին բանավիճել են գիտնականն ու քահանան, հավատավոր մարդիկ և աթեիստները: Համաշխարհային մշակույթի մի առեղծված հիմք ունի հենց այս ավետարանական պատմվածքը, և մենք այնքան ենք կարդացել, խոսել ու լսել Քրիստոսի զոհաբերության մասին, տեսել խաչելության սրբապատկերները, խաչակնքել, որ երբեմն մոռանում ենք, թե ինչ սարսափելի ցավ ու չարչարանք կա «խաչելություն» կոչվածի հետևում:

Հարկավ, խաչն այլևս փրկության (Հռոմ. Ե 8-10), նորոգության ու հաշտության (Բ Կորնթ. Ե 18-10), հարության (Եբր. Ժ 12-13), Աստծո գործության (Ա Կորնթ. Ա 18) և մեղքի ու մահվան հանդեպ Քրիստոսի ու քրիստոնյայի կատարյալ հաղթանակի (Փիլ. Բ 5-11) խորհուրդն ունի նրանց համար, ովքեր չեն պարծենում այլ բանով, քան միայն մեր Տեր Հիսուս Քրիստոսի խաչով (հմմտ. Գաղ. Ջ 14): Բայց այնուամենայնիվ հիշել է պետք, որ Տերը մեր գործած չարիքների ծանրությանն ի հատուցում ընդունեց, Ցիցերոնի բնորոշմամբ, մարդկանց հնարած ամենասարսափելի մահապատիժը:

Քրիստոսի չարչարանքները, սակայն, սկսվել էին խաչելությունից օրեր առաջ: Իր իսկ առաքյալներից մեկի կողմից մատնված լինելու ցավին գումարվել էր նաև գալիք չարչարանքների մասին միտքը: Եվ այս հոգեվիճակը նկարագրում է բժիշկ-ավետարանիչ Ղուկասը՝ գրելով. «Նրանից քրտինքը հոսում էր արյան կաթիլների նման» (Ղուկ. Ի44): Այսօր բժիշկները խոսում են այս երևույթի մասին, անվանում այն «Հեմատիդրոզ» (αίματα, αίμα - «արյուն», ιδρώς - «քրտինք»), երևույթ, որ առաջանում է մեծ վախի կամ անհանգստության պարագայում. արյան մազանոթները վնասվում են և արյունը քրտնագեղձերով դուրս է գալիս, մեծ ցավ ու տառապանք պատճառում:

Մրան հաջորդում է անքուն գիշերը, Պետրոսի ուրացումը, ձաղկումն ու ծաղրը, ատյանն ու փշե պսակը, Պիղատոսի անհեռատեսության պատճառով տեղի ունեցած գանահարությունը: Բանն այն է, որ նույնիսկ օրենքն էր արգելում նույն հանցանքի համար երկու անգամ պատժել մարդուն: Իսկ Պիղատոսը մտածում է, որ 39 սարսափելի հարվածներից այլևս արնաքամ Քրիստոսին տեսնելով, հրեա քահանայապետը կհրաժարվի խաչելության մտքից, և նա կկարողանա «փրկել» Քրիստոսին խաչելությունից: Մակայն քրիստոսամարտ ամբոխի պատասխանը միանշանակ էր ու անփոփոխ. «Դրա արյունը՝ մեր վրա և մեր որդիների վրա» (Մտթ. ԻԷ 25):

Հիսուս խաչի ճանապարհին անցավ՝ Իր խաչը «բարձեալ ի վերայ կենսաբեր ուսոյն ահեկի, ել արիաբար գառ ի վեր Գողգոթային, և եկեալ կանգնեաց աջովն աստուածայնով ի տեղին՝ վերստին կանգնելով զԱդամ ի փառս առաջին, յորմէ անկեալն էր» (սբ. Գրիգոր Տաթևացի):

Խաչելության ցավ ու տառապանքի մասին խոսելը դժվար է: Մարդը ժամերով, երբեմն էլ օրերով պետք է խաչից կախված մնար, ուստի դաստակի ոսկորները միայն կարող էին պահել մահապարտին խաչի վրա: Մեխերը մխրձվում էին դաստակի նյարդերի մեջ: Խաչելության դաժանությունը կայանում էր նրանում, որ ձգողականության ուժի ամբողջ ծանրությունը ոչ թե ձեռքերի կամ ոտքերի, այլ կրծքավանդակի վրա էր: Օայրահեղ լարվածության արդյունքում մարդն այլևս ի վիճակի չէր լինում շնչել և շնչահեղձ չլինելու համար պետք է հենվեր, սեղմեր իր մարմնի ծանրությունը ոտքերի մեխերի վրա, բայց սրունքները կոտրում էին (Տե՛ս Հովհ. ԺԹ 32): Խաչյալը հարկադրված էր շարժել իր ձեռքերը դարբնի կողմից պատրաստված անհարթ և կոպիտ մեխի շուրջ և բարձրացնել իր մարմինն ամեն անգամ, երբ կկամենար շնչել:

Տառապանքի վերջակետն էլ գեղարդի հարվածը եղավ, և Հաղորդության ու Մկրտության շնորհներով ոռոգված աշխարհն այս մի պահ լռության մեջ հիշեց մարգարեի խոսքերը. «Նա մեր մեղքերն էր վերցնում և մեզ համար չարչարվում, սակայն մենք նրա ցավերը, հարվածներն ու չարչարանքները համարեցինք իբրև Աստծուց եկած բան: Բայց նա խոցվեց մեր մեղքերի համար և մեր անօրենությունների համար դատապարտվեց. մեր խաղաղության համար նա պատիժ կրեց, և նրա վերքերով մենք բժշկվեցինք» (Եսայի ԾԳ 4-5): Հանկարծ խավար իջավ երկրի վրա, խավար ու լռություն, որն օրեր անց դարձյալ պիտի լուսավորվեր ու դողար հրեշտակաձայն ավետիսի ուժից:

Պատրաստեց Թովմաս դպիր Առաքելյանը

Եվ ձեռքերը տարածելով ու մեկնելով ոտքերն ի փայտ,
Դառն պտղի կյանքը մահվան փոխարկեց.
Երկու անօրենների միջև մերկ էր օրենսդիրը,
Որին կույր ազգից միայն ավագակը ճանաչեց:

Մեկ բուստում արեգակը ցերեկն արեց զիշերանման,
Ստվերը դարձրեց մերկության քող, որ չտեսնի
այքն անարժան.

Նա խոնարհվեց միջօրեին, երբ Ադամն էր մեռել մեղքով,
Իններորդին լուսավորվեց՝ Իր մահվամբ մահին հաղթելով:

Երբ լսում էր Տիրամայրը ձայնն իր ծարավ Միածնի,
Խաչի մոտ նա արտասվում էր, արցունք ցողում ցավագին.
Լեղախառն քացախ տվին բխողին գետն Ադենի,
Եվ բարի աղբյուրը վեմից, որն արբեցրեց դառն տոհմին:

Աքանջելիքները քարոզում են, որ ինձ համար խաչվեց Աստված,
Խոստովանում անմահ Աստծուն, որ մեռավ մեր բնությամբ.
Նա կողի զույգ աղբյուրներով հաստատեց իր եկեղեցին,
Որ ջրով է սրբվում և արյամբ արբում՝ Որդուն Հոր հետ
փառատրությամբ:

Մբ. Ներսես Շնորհալի

Ֆեյսբուքում մեզ կարող
էք հետևել այստեղ՝

www.facebook.com/gevorgianseminary

Ձեր հարցերը կարող եք ուղղել մեզ
հետևյալ էլ. հասցեով՝

gevorgianseminary@gmail.com

Հասցե՝ Մայր Աթոռ Սուրբ
Էջմիածին, Գնորգյան հոգևոր
ճեմարան
Հեռախոս՝ (010) 510 180

